

Տարեկան գինը 7 րուբլ, կես տարվանը 4 րուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրությանը, պ. Նատուրեանի, և Արամյանների խանութում:

Օտարաբաղադրյալը դիմում են ուղղակի

Туфлус. Редакция „Маско“

ՄԱՍԿ

Խմբագրությունը բաց է առաջին 10-2 ժամ (բացի կիրակի և տոն օրերից):

Ցայտարարությունները ընդունվում են ամեն (կապիտալ)

Ցայտարարությունների համար վճարում են ավելի քան 2 կոպեկ:

ՅՈՒՆԱՐԻ 31

„ՄԱՍԿ“ ՀԵՌԱՅԻՐԸ

ՄԱՐՏԻ 31: Յունվարի 27 (փետրվարի 8): Պալատին շոգենաւը, որ Հայոց ընկերութեան է պատկանում, դուրս է գալիս Մարտի 20-ին (փետրվարի 8-ին) Փօթի կը հասնի:

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

«Մալիկ» հեռագիրը:— Խօսք և գործ:— Եւրփին տեսնելին: Մեզ գործնական մարդիկ են հարկաւոր: Նամակ գործը: Նամակ Մասկովի: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:— Արտաքին տեսնելին: Թիֆլիս: Արտաքին: Նամակ թիֆլիսի: Արտաքին լուրեր:— Սառն լուրեր:— Ցայտարարութիւններ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ թղթ տուած Լօտարեայի Մանափողով կողմից որ հաստատուած է յօգուտ բարեգործական և դաստիարակական հիմնարկութիւնների Կովկասում և Անդրկովկասում, որ գտնուած է Մեծ Իշխանուհի Օլգա Գեորգիւհայի Օգոստոսիան հովանաւորութեան տակ, ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ թղթուածութեամբ յայտնուած է

1) Վերջական և առանց որ և է փոփոխութեան ժամանակ մի ջոցը մասնատուած զով զործունէութեան աւարտման, նշանակուած է փետրվարի 12-ը 1877 թ-ի, որ խաղարկութեան օրից կը կազմի մի տարի:

2) Այդ ժամանակի ընթացքում ամբողջ օպերացիայի հաշիւը կը վերաբնակի:

3) Մանափողովը խմբագրութիւնները, որոնք է այն անձանց և հիմնարկութիւնները, որոնք դեռ չեն վերցրել իրանց ստացվածները, կամ տոմարների ծախելու մասին հաշիւ չեն ներկայացրել, շտապէին այդ կատարել, դիմելով ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ պալատական կանտորայի (Придворная Контора) հասցեով: Թիֆլիս:

4) Առաջիկայ փետրվարի 12-ին կը փակվի Մասնատուողի զործունէութիւնը, որ իրան արդար պարտաւորութիւն է համարուած կատարել շուրջակաութեան զգացմանը փութելով դէպի այն ամեն անձինք և հիմնարկութիւններ, որոնք բարեհաճել են գործակցել նրա նպատակներին: և 5) Մնացած լրագրիներին թղթ է տրուում արտատուել այդ յայտարարութիւնը:

3 (3)

ԻՍՍԻԹԻ ԳՈՐԾ

Մենք հայերս բացառութիւն չենք կազմում ուրիշ հասարակութիւններից:

Ամեն հասարակութիւն որ նոր է սկսում կանոնաւոր կերպով վարդանալ, նախ և առաջ արդիւնաբերում է խօսքի մարդիկ, և այնուհետեւ գործի մարդիկ....

Խօսքն է որ միշտ եղել է և միշտ կը լինի գործի առաջնորդը, գործի կարապետը:

Մենք գեռ ևս զարգացման այն ստոր աստիճանի վրա ենք կանգնած, մեր ամբողջ գեռ ևս այն աստիճան թմրած, քնած դրութեան մէջ է, որ գործը գեռ չէ ներգործում նրա վրա, այլ նախ և առաջ խօսքով պետք է զարթեցնել նրա քնած ոյժերը, խթել, զրգռել, զրդել, արթնացնել նրան....

Հայոց տարրին, նրա ամբողջ պատմութեան մէջ, միշտ մի բան պակաս էր, և այդ գուցէ այն պատճառով որ հայութիւնը միակերպ տարրից է բաղկացած.... Հայոց ոգուն, հայոց բնաւորութեանը, հայոց տարրին մի նոր կեանք, մի թարմ ոյժ տալու համար գուցէ հարկաւոր կը լինէր որ հայերը խանութին ուրիշ ազգութիւնների հետ, ի հարկէ առանց կորցնելու իրանց ազգութիւնը և մայրենի լեզուն:

Հայերին, ասում ենք միշտ մի բան պակաս էր՝ հայը չունէր երբեք բանաստեղծութիւն, չունէր նոյնպէս քարոզչի, առաքելի բնաւորութիւն, — բայց մի և նոյն ժամանակ ունէր գիտնական ծանր, զրական գրականութիւն, ունէր միշտ միլիտարիստական ոգի, որ ստեղծեց ճիշտ պատմական և աստուածաբանական գրականութիւնը....

Եւ այդ գրականութեանը միշտ պակաս էր ժողովրդական ոյժ, ժողովրդի վրա ազդելու ընդունակութիւն.... Հայը չէ ժողովրդացնում իր գիտեցածը, չէ ներգործում ինչպէս հարկն է իր ամբողջ վրա.... Նա այդ շնորհը չունի....

Հայութեան մէջ նոր են սկսում գուցէ տաս, տասն և հինգ տարի, երեսն գալ այնպիսի ձեռնարկութիւններ, ինչպէս լրագրութիւն, թատրոն, ուսումնարաններ, դաստիարակութիւններ, որոնք նրա պատակ ունեն խօսքի միջոցով առաջ մղել ազգը, զարթեցնել նրան խօսքի միջոցով և աւելի բնագունակ անել նրան՝ մտաւոր և բարոյական պաշարը ստանալուց յետոյ՝ բարեբեւ իր նիւթական, տնտեսական և հասարակական գրութիւնը....

Կեանքի մէջ պատերազմելու

համար հարկաւոր է լաւ գիտաւորական լինել, հարկաւոր է ձեռքում գէշ ունենալ, — իսկ այդ գէշը, մի ազգի համար նրա մտաւոր և բարոյական կրթութիւնն է:

Բայց ինչով է ստացվում, ինչով է ձեռք բերվում այդ կրթութիւնը, — խօսքի միջոցով:

Այո, մեզ հարկաւոր են գործնական մարդիկ, բայց գործնական մարդիկ առանց խօսքի, միայն գործի մարդիկ անհասանելի, անհասկանալի, անհասկանալի են մի թմրած ժողովրդի համար: Նրանք դժբաղդապէս չեն ընդունվում այդ տեսակ հասարակութեանը, չեն աջակցում և չեն կարողանում իրանց գործը տեսնել, մինչև որ նրանց գրամական գործունէութեան համար հոգը պատրաստած չէ խօսքի մարդիկների ձեռքով....

Ուրեմն գեռ գուցէ երկար ժամանակ մեզ հարկաւոր են, թէև ի հարկէ գործնական մարդիկ, բայց խօսքի մարդիկ.... Մեզ հարկաւոր են խօսքի գործնական մարդիկ....

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵԶ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՐԿԻՆ ԵՆ ՀԱՐԱՄԻՐ

Մեր գրականութեան մէջ վերջին ժամանակներս երեւցան մի բանի յօդուածներ գործնական մարդիկների հարկաւորութեան մասին: Այդ պահանջող ձայները կամեւում էին ասել, որ մեր մէջ զարթած կենսական հարցերը, արած զանազան առաջարկութիւնները վերջապէս պետք է ստանան իւրեանց իրադրութեան կեանքի մէջ և թէ այդ իրադրութեան համար պետք է պատրաստ լինին մարդիկ, որոնց ասածը և արածը միայն կապուած լինին և մէկ միւսին հաստատող, պաշտպանող ու առաջնորդող — այդ պահանջով կամեւում են փոքր առ փոքր ունեցնել այն անդունդը, որ միշտ եղել է խօսքի և գործի մէջ:

Հարցնում է. երբ չենք եղել մեր կարօտ մարդիկների, երբ մեզ հարկաւորութիւն չեն ունեցել մեր կեանքի մէջ նոր շունչ և ոգի փչող անձինքների: Այդ հարկաւորութիւնը և կարօտութիւնը ունեցել ենք մեզ առաջ էլ, ինչպէս և այժմ: մեր առաջնայ կեանքը մինչև անգամ աւել անբաւարար է եղել, քան ներկայումս. բայց այն ժամանակ այդ պակասութիւնը մեզ — ինքներս այնքան զգում չենք եղել....

Եւ կամեւում եմ ասել այնպէս որ

տունը մէջ սկսում է նշմարել ժողովրդի պահանջը, աչքի է ընկնում զգացող անհրաժեշտ կարիքը, որ նոյնպէս աշխատում է տալ իրան բաւականութիւն, ինչպէս և ուրիշ այսօրեայ պահանջներից մէկը: Այդպիսի պահանջների նշան է բոլոր շատ ուրախալի երեւոյթ են ներկայացնում մեր առաջ, դա մեզ ցոյց է տալիս, որ մեր կեանքի մէջ կայ ձգտում դէպի յառաջդիմութիւն, կայ զորգացում պահանջների և մանում է ծղուտների բազմակողմանիութիւն:

Ուրախ մի ժողովրդի մէջ աւել է զգացվում մի պահանջ, այնպիսի էլ սաստիկ է երեւում և ջանքը տալ նրան բաւականութիւն. և նա լուծում է միայն այն ժամանակ, երբ վերջինս լաւ թէ վատ իրադրութեամբ համարուող ոյժերի և մարդիկների պահանջը թոյլ է տալիս մեզ յուսալու, որ մեր երկրատարգութիւնը պետք է աւելի ու աւելի տեղ ստանայ մեր հասարակութեան մէջ, պետք է կարողանայ աշխատել և գործել նոյն շրջանի մէջ, որ եղել է և նրա կեանքի օրօրոցը:

Խաղարկութիւնը պետք է հայել լինի ժողովրդի ժամանակակից պահանջների և արտայայտող նրա օգուտների: Մեր լրագրութիւնը որպիսի որ աշխատի էլ, գարնապալմանամօտիկ կապ և յարաբերութիւն չունի ժողովրդի հետ: Պատահում է որ ամբողջ հասանքներ, քաղաքներ զբաղուած են լինում մի որևէ ինչ խնդրով և այդ խնդիրը մինչև անգամ յայտնի չէ լինում լրագրութեան: Խաղարկութեան և ժողովրդի մէջ չը կայ այն սերտ յարաբերութիւնը, որ ժողովրդը կարողանար նրան համարել իւր մօտիկ բարեկամը, խորհրդատուն և իւր արտայայտութիւնը: Քիչ պատահումներն են լինում, որ մեր մէջ ժողովրդը, ամբողջ լրագրութեան հարց առաջարկեր և նրանից սպասեր պատասխանի, որ մամուլը միջոցով պարզել իւր տնտեսական տարակուսանքները....

Խաղարկութիւնը այդ միջոցով ի հարկէ կը սկսի քննել հարցը բազմակողմանի, կաշխատի տալ այդ խնդրի փնտման համար հարկաւոր նիւթ, ցոյց կը տա միջոցներ ուղղել նախքան այս կամ այն երեւոյթի վերայ — այսինքն կը պատրաստի նոյն ինքն ընթերցողին վշուելու առաջարկուած հարցը:

Անկասկած կեանքի մէջ դարձեալ գործնական մարդիկը առանձին տեղերում աւելի են անում: Նրանք տալիս են հարկաւոր պատասխաններ ավելազին հարցերին էլ — առնուաբար զեղծաբան, տարիս են խոստովանել և այլն և այլն: Գործնական մարդիկը այդ պատճառով պետք է ունենան մեծ մասնաւոր պաշար, հիմնաւոր գիտութիւն և բարոյական մի քանի անհրաժեշտ արժանաւորութիւններ: Տեա հաստատ կամք:

Եթէ գործող մարդիկ միայն աւելանային մեր մէջ, պարագուելու և աշխատելու դէպքեր շատ կը գտնուէին, մեր ժողովրդին սթափեցնէին դեռ չը վերջացած դարաւոր քնից, յոյց տային խօսքով և գործով մի ուրիշ գրութեան, մի աւելի շքեղ ու երջանիկ թէ մասաւոր և թէ տնտեսական կողմից) ապալազայի վերայ: ապա զանազան յարցերով միայն իրենց ինքն, որ պատահանքեր մի կողմից շատանում են մեզանում, միւս կողմից գիտակցական են դառնում — գարնապալման կրկնում ենք, որ գործնական կեանքը սպասում է գործող անձինքների, պահանջում է իրադրութեան արած առաջարկները:

